

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիգուլով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաւանչիւր բառին 2 կոպեկ:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

23-րդ ՏԱՐԻ

23-րդ ՏԱՐԻ

ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակի թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղությամբ և ամբ: Մենք ստանում ենք սեփական ՀեՌԱԳԻՐՆԵՐ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԷՆ ՍԿՍՎԱՄ Է:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը՝ 6 ռուբլի, ամսական՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ»-ն գրվել կարելի է խՄԱԿԱՐԱՍԱՆԸ (Բաղարայան և Բարոնակայան փողոցների անկիւնը) և կայարանի մոտ՝ քաղաքներից «ՄՇԱԿ»-ն գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է գրել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ախալ ճանապարհ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անտոն Բուրիշտէն. Մրգավաճառների ստացած պարգևները. Նամակ էջմիածնից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոր տեղեկութիւններ Սասունից. Հայերի կոտորածը Մուշի գաւառում. Բ. Գուրը և ազգային ժողովը. Ֆրանց Կոչուտ և ունգարացիները. Պարսկահայերի կեանքից. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մօակայի հայերը:

ՍՊԱՆԱԿԱՐԶ

Թիֆլիսի անցեալ տարվայ, Բագուի և Բաթումի այս տարվայ քաղաքային ընտրութիւնները ծանր և ակուր տպաւորութիւն են թողնում իրանց բռնած ուղղութեամբ: Նախապատրաստական ժողովներում, ձայնաւորների ցուցակները կազմելիս, ի նկատի են առնում ոչ թէ մարդկանց արժանաւորութիւնները և ընդունաւորութիւնները, այլ այն, թէ նրանք ինչ ծագում ունեն, որ ազգութեան են պատկանում:

Դա մի շատ սխալ և վտանգաւոր ճանապարհ է, որի վրա ոտը է դրել մեր երկրի ազգաբնակիչները, մի ճանապարհ, որ ոչ մի էական օգուտ չը բերելով ա-

ռանձին ազգութիւններին, մի և նոյն ժամանակ մեծ և անվերջ երկպառակութիւնների տեղիք կարող է տալ թէ այժմ և թէ ապագայում:

Քաղաքային ինքնավարութիւնը իր մէջ է պարունակում ազգութեան խնդիր. նա է շոշափում ոչ կրօնի, ոչ լեզուի, ոչ առանձին ազգութիւնների պատմական աւանդութիւնների հարցեր: Դա մի ընդհանուր հիմնարկութիւն է, որտեղ բոլոր ազգութիւնների շահերը պահպանվում են, և միտ պէտք է պահպանվեն հաւասար կերպով, և որի նպատակն է քաղաքի ամբողջ ազգաբնակչութեան շահերը, առանց խտրութեան կրօնի և ազգութեան:

Քաղաքային ձայնաւորների առջև դրված են քաղաքի բարեկեցութեան վերաբերեալ բազմաթիւ գործեր: Պէտք է հոգալ ժողովրդի առողջութեան մասին, պէտք է ջրբանջքների անցկացնել, պէտք է մաքրել փողոցները և հրապարակները, լուսաւորել քաղաքը, վարդապետ քաղաքի արդիւնագործութիւնը, պաշտպանել նրա շահերը և այլն և այլն:

Այդ բոլորը անելու համար քաղաքային դոմայնով հարկաւոր են գործունայ, քաղաքի պետքերին ծանօթ մարդիկ, որոնք իրանց պատրաստութեամբ, իրանց հմուտութեամբ օգնեն ինքնավարական մարմինն՝ իրաւորեալ այն ծրագիրները, որ առաջ

են բերել կեանքի հանգամանքները և պահանջները:

Եթէ ձայնաւորների մի կազմութիւն, մի քանի տարի իր ձեռքում բռնելով քաղաքային գործերի ղեկը, վերջ ի վերջոյ ոչինչ էական օգուտ չի տալ քաղաքին, այլ նրան կը դնի անհաշիւ ձեռնարկութիւններ իր անկեղծ մէջ, կը դնի քաղաքը այնպիսի սի պարտքերի մէջ, որ նա հատուցանել անկարող է, այն ժամանակ ինչ ձև ունի նա արդարանալու, ինչ կօշտեն նրան այս կամ այն ազգութեան պատկանելը: Եւ ինչպէս կարող է հասարակութիւնը երկար ժամանակ անտես անել այն անձանց, որոնք ոչ միայն ապացուցել են, որ իրանք օգտակար և հմուտ մարդիկ են, այլ և այնքան հարկաւոր են, որ նրանց բացակայութիւնը զգալի կերպով փնտրւում է գործերի ընթացքին, բայց որոնք ազգայնական պայքարի պատճառով դուրս են մնացել ինչ ընտրվել:

Փորձը և դառն փորձը կը համոզի քաղաքային ինքնավարութեան մէջ գործող անձանց և նրանց ընտրողներին, որ այն ընթացքը, որ բռնել են վերջին ընտրութիւնների նախապատրաստական ժողովները, ձգտելով բացառիկ արտօնութիւններ ստեղծել այս կամ այն ազգութեան համար, վերին աստիճանի անօգուտ և վրտանգաւոր են ինքնավարութեան կանօնաւոր գործունէութեան համար:

Սակայն պէտք է չը սպասել մինչև որ կեանքի երբեք ուշացած և շատ դառն փորձը սխալիցնի մարդկանց, այլ անհրաժեշտ է, որ հասարակութեան խելացի մասը ուժեղ կերպով բողոքէ այդ տխուր երևոյթի դէմ, աշխատելով քաղաքային ընտրութեան մէջ իբրեւ դեմք ընդունել ոչ թէ կրօնը, կամ ազգութիւնը, այլ անձնական արժանաւորութիւնը և ընդունաւորութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՏՈՆ ԲՈՒՐԻՇՏԷՆ

Նոյեմբերի 8-ին, ինչպէս երէկ հաղորդեց հեռագիրը, Պետերսօֆում վախճանվեց Անտոն Բուրիշտէնը:

Անտոն Բուրիշտէն, այդ հանճարաւոր երաժիշտ-կոմպոզիտոր և առաջնակարգ պիանիստը, ծնվեց 1829 թին Նոյեմբերի 30 ին Վոլինի նահանգի Վախվատինցա ասկած տեղում, Մոլդավայի սահմանի մօտ: Նրա մայրն էր առաջին դեկավարը երաժշտութեան մէջ երկու եղբայրների՝ Անտոնի և արդէն վախճանված Նիկոլայի, որոնք մանկութեան ժամանակ ընտանիքի հետ միասին տեղափոխվեցին Մոսկվա, որ երկու եղբայրները պարսպում էին երաժշտութեամբ նոյնպէս արդէն վախճանված Վիլլուանի մօտ: Ինն տարեկան հասակում, 1838 թին, Անտոնը հրապարակապէս անցեց Մոսկվայում 1839 թին, Վիլլուանի հետ միասին Պարիզ գնաց, որ անց Վիտի առաջ՝ նրա փառքի ամենափառաւոր շրջանում և Վիտը անկեղծաբար մեծ ապագայ էր նախագուշակում Անտոն Բուրիշտէնին: Ապա Բուրիշտէնը երկու եղբայրները, Միլերերի խորհրդով, ուսումնասիրեցին երաժշտութեան թէորիան Բերլինում յայտնի Գլէնի մօտ, որը նոյնպէս Վիլինայի ուսուցիչ էր եղած:

Արտասահմանում երկար ժամանակ ճանապարհորդելուց և կոնցերտներ տալուց յետոյ, Բուրիշտէնը 1848 թին վերադարձաւ Ռուսաստան և սկսեց իր պատանեկական ստեղծագործութեան փորձերը Վիմպերի Դանկոյ, Վիմպերիական որսորդ և Վոսկա — դուրաչեւի, օպերաներով: 1859 թին սկսվեց Ա. Բուրիշտէնի պտղաբեր գործունէութեան շրջանը: Ռուսաց երաժշտական արուեստի համար Մեծ իշխանուհի Ելենա Պաւլովնայի հովանաւորութեան շնորհով, Բուրիշտէնը և Ռուսաց երաժշտական ընկերութեան և կոնսերվատորիայի զլլաւոր հիմնադրը դարձաւ Պետերբուրգում, 1862 թին, որի դիրեկտորն էր նա մինչև 1867 թիւը:

Ռուսաց երաժշտական կեանքի գլուխ կանգնելով, նա շատ շուտ բաղձրացրեց երաժշտական-կրթութեան մակերևոյթը և տարածելով երաժշտական կանոնաւոր հասկացողութիւններ, նա հաստատեց այն հիմնաւոր ուղղութիւնը երաժշտութեան մէջ, որին պարտական է Ռուսաստանը ներկայումս: Բուրիշտէնի ստեղծագործական գործունէութիւնը զարմանալի է իր բազմակողմանիութեամբ, աներևակայելի արագութեամբ և անխնայութեամբ: Գծուր է մի առ մի յիշել նրա բոլոր հնգհնակութիւնները, որոնց թիւն պատկանում են 21 օպերաներ, 5 սիմֆոնիաներ, 2 օրատորիաներ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Ամեն հասարակութիւն ունի իր արամադրութեան մակընթացութիւնները և տեղաւորութիւնները: Առաջին դէպքում հասարակական կեանքի ծիւղն մակերևոյթի վրա բարձրանում են մարդկային ընտելեան լաւագոյն կողմերը, մարդիկ սկսում են մտածել, խօսել ընդհանուր գաղափարների մասին, իրենցները ստանում են ղեկավարիչ դեր և հաստատվում են կամուրջներ այն անդունդների վրայով, որոնք բաժանում են մի մարդկային եւ մի ուրիշ եւսից: Վերջին դէպքում՝ լայն հայեացքների և վեճ գրգռմունքների հետ քաջուղ հասնելը թողնում է իր յետեւից աւագոտ տարածութիւն, որի մէջ թաղվում և կորչում է այն ամենը, ինչ որ ազգային է և հանրային, այն ամենը, ինչ որ բարձր է և դուրս է եսից:

Մի քանի նշաններ մեղ առիթ են տալիս ենթադրելու, որ Մոսկվայի հայերի համար այժմ սկսվում է այն շրջանը, որ մենք նմանեցրինք ծովի մակընթացութեան: Այդ նշանները առայժմ նկատվում են այստեղի հայ կոյտնայի,

ի թէ կարելի է այսպէս ասել, ամենից աւելի արձագանքատու (отзвучивающ) տարրի՝ ուսանողների և երիտասարդ վաճառականների վրա:

Մոսկվայի ուսանողներն ամսին մենք դէպք ենք ունեցել լսել ամենանպաստաւոր կարծիքներ այնպիսի անձերից, որոնք ճանաչում են բոլոր տեղերի հայ ուսանողներին: Մենք յաճախ լսել ենք, որ այստեղի ուսանողները առաջին տեղը է բռնում ամբողջ հայ ուսանողութեան մէջ: Մի կողմ թողնելով այդ հարցը, որ կարող է վիճել լինել, մենք այնու ամենայնիւ հարկաւոր ենք համարում նկատել, որ Մոսկվայի հայ ուսանողութիւնը աչքի է ընկնում իր լրջութեամբ, իր հասարակական բնագործունէրով, իր խելացի աւանդութիւններով և իր համակրելի ձգտումներով:

Վերջերք մեր այժմեան հասարակական գործիչներին և նրանց մէջ նրանց, որոնք յայտնի են իբրեւ կուսակից լայն հայեացքների, աղնիւ սկզբնականների, անկեղծ ուղղութեան, և դուք կը տեսնէք, որ նրանց մէջ ահագին տոկոս կազմում են Մոսկվայի համալսարանի նախկին սաները: Այդ երեւոյթը մասամբ է միայն բացատրվում այն հանգամանքով, որ, եթէ մի կողմ թողնելու լինենք Պետերբուրգը, Մոսկվայի ուսանողները թեով հաւասար են բոլոր միւս ուսանողներին հայ ուսանողներին: Համեմատ

աւար բիշ նշանակութիւն ունի և այն, որ Պետերբուրգի ուսանողութեան նշանաւոր տոկոսը իր դասընթացը մասնագիտական զգոյցներում աւարտելով ընտրում է այնպիսի գործունէութիւն, որ քիչ պաշտ ժամանակ է թողնում հասարակական գործերի համար: Այդ բանում, մեր կարծիքով, մեծ նշանակութիւն ունի այն զբաղումը, որ անցնում են ուսանողները իրանց համալսարանական կեանքի ընթացքում: Այդտեղ է Մոսկվայի հայ ուսանողութեան առաւելութիւնը և դրա շնորհիւ է նա զրաւում կողմնակի մարդկանց համակրութիւնը:

Ճիշդ է՝ այստեղի հայ ուսանողների մէջ նկատվում է պակասութիւն իրենց իրաւական օգուտութեան, բայց այդ նրանք քիչ են հետաքրքրվում տեսական հարցերով և ամենին չեն զբաղվում գիտութեամբ: Բայց առաջինը մեր աղջկային պակասութիւնն է, տեսական հարցերը միայն մեր զրաւանդութեան ոսկեպարուն են հետաքրքրել հայերին, իսկ գիտութեամբ զբաղվելուն շատ խանգարում են երկու հանգամանք. նախ՝ հայերի գործնական ուղղութիւնը, և երկրորդ՝ մեր բոլորից ինքնուրուպ երազական ինքունների հմտութեան կորուստը: Ինչ լուրջ, որ այդ կատարելապէս չէ արդարացնում ուսանողներին, որոնցից շատ է պահանջվում, որովհետեւ շատ է արված:

Անցնելով այստեղի երիտասարդ հայ վաճա-

ռականներին պէտք է խոստովանենք, որ նրանք վերին աստիճանի միսթարական երեւոյթ են կազմում մեր կեանքում: Թող ներեն մեզ ուրիշ տեղերի հայ վաճառականները, ի թէ մենք սխալվում ենք, բայց որքան մենք գիտենք, այստեղի երիտասարդ հայ վաճառականը կարող է աւելի բացառութիւն համարվել, քան թէ տիպ հայ վաճառականների համար: Կարելի է առանց չափազանցութեան մէջ ընկնելու ասել, որ չը կայ մի հասարակական հարց, որ չը հետաքրքրի այստեղի երիտասարդ վաճառականներին, չը կայ մի համակրելի ձեռնարկութիւն, որ արձագանք չը գտնի նրանց շրջանում, չը կայ մի ազգային մէք, որ չը ցուցնի նրանց սիրտը: Մեր խօսքը, ի հարկի, ընդհանրութեան մասին է և ոչ առանձին-առանձին անհատների, որոնց անձնական արժանաւորութիւնները կամ պակասութիւնները հետաքրքրի չեն մեզ համար:

Գծախառնաբար նոյնը չէ կարելի ասել Մոսկվայի հայերի երրորդ դասի՝ բուրժուազիայի մասին: Այստեղի հայ բուրժուան կարծէք հասարակական հարցերով հետաքրքրվել և հանրազգային զգացմունքներով համակվել այնպիսի շրջանակներ է համարում, որ խոսնմ մարդը միանգամ միայն կարող է թող տալ իրան իսկապէս ասած նա մինչև անգամ բուրժուա չէ, այլ բուրժուա չէ, ինչպէս անուանում է Գլէն Ռու-

դաշնամուրի 5 կոնցերտներ, շատ կվարտետներ և կվինտետներ, մօտ 100 բանասեր, դաշնամուրա- յին զանազան գրողներ, ուղեւորներ, սիմֆոնիական պատկերներ և այլն:

Բուրժուական ստեղծագործութիւնը ամեն տեղ արտասահմանում զեղարուեստական մեծ նշանա- կութիւն ստացաւ, որը խոստովանում էին և ե- րաժշտական աշխարհի աստղերը՝ Նրա մի քանի օպերաները և սիմֆոնիաները միմեանց հետեւից արվում են ամբողջ Գերմանիայում, իսկ նրա մի քանի այլ հեղինակութիւնները տարածված են նոյնպէս Լոնդոնում, Պարիզում և Ամերիկայում: Նրա անձամբ ներկայութիւնը՝ 1872—73 թ. Ա- մերիկայում, 1877 թ. Ֆրանսիայում և Պարիզում, ապա շատ յաճախ Գերմանիայում, Աւստրիայում և Սլոնիայում, ամեն տեղ հիացում էր պատ- ճառում և նրան ողբերկած ցոյցեր էին անում:

Վերջին տարիները, վերջապէս, ուսում հաս- րակութիւնն էս սկսեց գնահատել նրա երաժշ- տական տաղանդը և ծառայութիւնները: Նրա «Իվան Գրոզնի» և «Գոնի-Ալիսա» սիմֆոնիական պատկերները հասարակութիւնը սկսեց ոգևորված հերթով հաւանել, նրա «Գեման», «Մակաբէյ» և «Երթոն» ստեղծագործութիւնները Պետերբուրգի հասարակութեան սիրած օպերաները դարձան, իսկ «Մակաբէյ» օպերայի առաջին ներկայացումը Մոսկվայում (փետրվարի 23-ին 1883 թ.) ահա- ղին, մի չը տեսնված աջողութիւն ունեցաւ: Մոսկվայի մեծ թատրոնում:

Նրա դարմանալի և բնութեան ձիրքերով ա- ռատապէս օժտված անձնատրուութիւնը ամեն տեղ մեծ ապագութիւն էր գործում: Կովկասցիք ևս բարդ ունեցան մի քանի տարի առաջ տեսնել Բուրժուական թիֆլիսում, ուր նա արքունական թատրոնում կոնցերտ տուեց, և ա- պա մի ամբողջ ամառ անցկացրեց Կովքի ամա- րանոցում: Կովքի հասարակութիւնը յաճախ առիթ ունէր լսելու մեծ երաժշտի անձը, երբ նա իր ամառանոցում որոշ ժամերին առաւօտնե- րը անում էր դաշնամուրի վրա, և ուր հանգուցեա- ւը բոլորի երկրպագութեան առարկայ էր:

ՄԻՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ ՍՏԱՅԱՍՏ ՊԱՐԳԵՆԵՐԸ

Պետերբուրգի միջոց հանդէսում պարզանք են ստացել Անդրկովկասի հետեւում մրցադրոնները: Առաջին բաժին. թարմ մրցերի և ընդե- ղենների համար ստացել են՝ Շահիբով եղբայր- ները և Գարեթովսկին—մեծ արծաթեայ մեդալ, Սակարի այգին և Համբարձում Էնֆիանցանց— փոքր արծաթեայ մեդալ: Սպեշնով, Հ. Էնֆիա- ճեանց, մրցերի ժողովածուների համար—պա- տուակներ, Գլիվանի և Կվիլիլի դպրոցները, Մամադ-Իբրահիմ Խամայի-Օղլու-Օսման-Հալիլ-Սահմա- ղը, Ա. Աֆրիկան, Սէյիթ-Մահմադ Չալաբը և Հա- ջի Զինար-Օղլու՝ բրոնզի մեդալ: Գովառան ա- կան թե թե են ստացել—Բախլի դպրոցը, Այդե- նով, Արուսիւն Գեորգով, Մահմադ-Ալի-Ֆաթալի,

պէնսկին համանուն ուսուցիչներ: Նա այն խմորից չէ շինված, ինչ որ եւրոպական բուր- ժուան, զիցուք ֆրանսիականը, որ ընդունակ եղաւ որոշ պատմական րօպէում մարմնացնել իր մէջ այդ վայրկեանի ամենաառաջնիւմ գաղափարնե- րը: Ապրիլով Մոսկվայում, արտաքուստ շփվելով քաղաքակրթութեան ամենանոր արտայայտութիւն- ների հետ, հայ բուրժուական հասարա- րիւմ է մտնում իր պայպական աւանդութիւններին, անարատ կերպով պահպանում է իր գաւառական քաղաքի կուլուրան, նախապաշարմունքները, ա- ղայական մեծամտութիւնը, այն համոզմունքը, որ հարուստ լինելով նա eo ipso և պէտք է մեղա- չորհրդութիւն ունենայ զեկակարելու տեղական գործերը, խնամքով պահպանելու զէպի հա- տարակական պաշտօնները և ձգտումն հովանաւո- րելու շողորդութիւնին, որոնց շնորհիւ մինչև այժմ, երբ նրանց ասածն ասած էր, կտրած էր, որ այնպիսի մի մարդ, որ ամեն օր խաբու է իր հետ գործ ունեցող իւրաքանչիւր մարդու, կարող է նոյնքան անգործելի համարել իրան այստեղի հայ հասարակական պաշտօնում, որքան անգլիա- կան լորդը՝ իրանց պարտում:

Սակայն այդ նորութիւն չէ այդտեղացիների համար, ամեն տեղ համանուն պատճառները ա- ռաջ են բերում համանուն հետեւանքներ: Զննա-

Նադիր-Մահմադ, Միրզա Օսման-Օղլու, Ալի Արիֆ- Օղլու և Գեորգով:

Երկրորդ բաժին. պարտիզպանական ար- ղիւններին համար, Բախլի դպրոցը ստացել է բրոնզի մեդալ:

Երրորդ բաժին. չոր մրցերի և ընդդէմնե- րի համար Գանձակի Միքայէլեան արհեստաւո- րաց դպրոցը ստացել է արծաթե մեդալ, իսկ Թիֆլիսի այդգործական դպրոցը—բրոնզե մեդալ:

Չորրորդ բաժին. զինու. համար իշխան Անդրոնիով ստացել է կովկասեան Գեորգան- տեսական ընկերութեան մեծ արծաթեայ մեդա- լը, Տերենտիլ արաղի համար, Փրիզով և Գիկէ- նսով՝ զինու. համար—միջակ արծաթեայ մեդալ:

Հինգերորդ բաժին. Բախլի դպրոցը՝ սեւ- մերի համար—բրոնզե մեդալ:

Վեցերորդ բաժին. գործիչների համար Գանձակի արհեստաւորաց դպրոցը—փոքր արծա- թե մեդալ:

Եօթերորդ բաժին. գիտական գործիչնե- րի և ժողովածուների համար, Գանձակի արհես- տաւորաց դպրոցը և շերամապահական կայարա- նը ստացել են պատուաթիւրք, Սպեշնով—բրոն- ղե մեդալ և Բախլի դպրոցը—շնորհակալութիւն:

ՆԱՄԱԿ ԷԶՄԻՍՏՆԻՑ

Նոյեմբերի 1-ին

Հաղորդում ենք մի քանի տեղեկութիւններ Էջ- միսեանի ճեմարանի այժմեան վիճակից:

Ճեմարանում զբաղարի ուսումը ամենալայն ծաւալ է ստացել: Շատ ժամեր են նուիրվում խորհնացուց, եղիչից և այլ պատմագիտական ամբողջ գիտելիք անցնելու, շատ անգամ ոչինչ չը հասկանալով: Աշխարհաբար զբաղանու- թիւնը գրեթէ գոյութիւն չունի:

Վեհափառի ցանկութեան համամաս, ճեմարա- նի երրորդ ցանկանալու կուրսի մէջ մտցած է բոլոր բանու թիւն, նոյն այդ դասարանի կուրսում, ինչպէս մի գիտաւոր ասող, երեաց լիարդ Աստուածապաշտութեան նոր ուսումը և կրկին անհետացաւ:

Նոյնպէս վեհափառ հրամայել է, որ վեցե- րորդ դասարանցիները և լսարանցիները սովորեն զիւրադանսութիւն: Բուսաբանութեան և թէ զիւրադանսութեան ուսուցիչ է հրաւիրված գիւ- ղատնտես Ա. Աթմասեան, որը արդէն սկսել է իր դասախօսութիւնները: Աշակերտները հետաք- րելով են այդ օգտակար գիտութեամբ:

Նախկին տարիներում ճեմարանում եղել է ըս- տիպողական պարապմունք օրական 8 ժամ (5 դաս և 3 սերտողութիւն), իսկ այժմ 11 ժամ (6—7 դաս և 4 սերտողութիւն): Այս աւելորդ ժա- մերը լրացրել են՝ կարճելով դասամիջոցները, ո- րոնք սակայն մեծ նշանակութիւն ունեն սաների ֆիզիկական աւուրջութեան համար, մանաւանդ ճեմարանի փակ կեանքը և վաղաշապատի վա- տառաջ կլիման ի նկատի ունենալով:

Ճեմարանի համար կազմվում է մի նոր կանո-

նուում երկարացնել մեր խօսքը այդ մասին և այն պատճառով, որ թերեւ այդ հարցը մօտեցնա- նելով տալ մեզ մի առանձին յօդուածի համար:

«Մշակի» միւս թղթակցի նամակից ընթերցող- ները տեղեկացան այստեղի ընտրական գործերի գրութեան մասին: Որովհետեւ այստեղ էլ կան մարդիկ, որոնք անկեղծապէս են համարում ամեն մի ընտրութիւն, որ ձեռնարկ չէ իրանց, մարդիկ, ո- րոնք այս կամ այն պատճառով չեն ցանկանում իրանց պաշտօնակից և ուրեմն իրանց գործու- նելութեան վերահսկող ունենալ իրանց հետ խնա- մութեան կապերով չը կապված անձանց, որով- հետեւ այստեղ էլ կան գիպլ օմա տն եր, որոնք չը կարողանալով աղղել ընտրող հասարակութեան վրա (որի հոգեբանութիւնը չեն հասկանում և ո- րի համար հարկաւոր են համոզելու ընդունակու- թիւն և բարոյական արժանաւորութիւններ), աշ- խատում են ներգործել առանձին անհատների վրա, որոնց դանաղան երա կն երը լաւ ուսումն- նաւորել են և որոնց վերաբերմամբ շատ աղղու- են ad hominem կոչող ապացոյցներ, վերջա- պէս, որովհետեւ այստեղ էլ կան այնպիսի տիպեր, որոնք ստեղծված են ձկուն մէջքով և քաւ լե- ջուով, որոնք գիտեն հիւսել սարդի ոտալիներ շողո- ջորթութեան և զրպարտութեան ամենանոր թելե- րից,—կարող է պատահել, որ վերջին ծխական ընտ- րութիւնները նոյնպէս չը հաստատվին: Այդ դէպ-

նադրութիւնն Կանոնադրութիւնը պէտք է կար- դացվի վեհափառի մօտ, որը իր հաճութիւնը տալուց յետոյ, պէտք է տպագրվի և աշակերտ- ներին մի մի օրինակ բաժանվի:

Ճեմարանի դռները փակ են այցելուների առջև: Այս տարի մաթեմատիկական առարկաներին ա- մենալից տեղն է տրված ճեմարանում: Ահա լրանում է առաջին եռամեակը, բայց դեռ վե- ցերորդ դասարանում երկրաչափութեան դաս եր- րեք չեն անցել, և ինչպէս երեւում է ընդհանուր տրամադրութիւնից, այլ ևս չեն անցնելու: Հէնց նոյն այդ վեցերորդ դասարանի կուրսից կրճատել են տեղեկագրութիւնը, որի ֆիզիկական մասը անցել էին հինգերորդ դասարանում:

Վ—ցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՒԹԵԱՆ

Էջմիածին, հոկտեմբերի 27-ին

Դիւանս այսու ծանուցանէ ձեզ, զի առաջնալի- ի պատ. խմբագրութիւնը 100 րուբլին ի նը- պաստ սովելոց ստացնալ են և մատուցեալ առ Նորին վեհափառութիւն, որ և օրհնէ զձեզ և դամենայն նուիրատուս իւրով հայրապետական օրհնութեամբ:

Դիւանադպր. խորհն եպիսկոպոս Ստեփանէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարի հետ, ինչպէս ամեն տարի, այս տարի էլ ուղարկում ենք մեր բաժա- նորդներին տպած ծրարն եր և նա մակն եր, 1895 թ. բաժանորդագրութեան համար:

Կ. Պոլսից մեզ գրում են, «Լուրեր կը պտտեն, որ կատալաբութիւնը պաշտօնեաներ պիտի ու- ղարկի Մուշի կողմերը՝ այնտեղ պատահած անց- քերի մասին ձեռք տեղեկութիւններ բերելու»: Զարմանալի է, որ թիւրքաց կառավարութիւնը ինքը իր տեղական պաշտօնեաներին չէ հաւա- տում, և դեռ նոր մարդիկ է ուղարկում Սասունի և Մուշի կողմերը՝ պատահած սոսկալի դէպքերը տեղեկագրելու համար:

Նախկին զինւորական մինիստր կոմս Մելի- տին, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրա- գիրները, բարձր պաշտօն է ստանում:

Լսում ենք, որ Գրիգոր եպիսկոպոս Աղաթի- րեանց, որը այժմ վանահայր է Վերին-Աղուլիսի վանքի, առաջարկված է սինոդի անդամ: Վերին- Աղուլիսի մեր թղթակիցը հաղորդում է, որ Ա- ղաթիրեանց եպիսկոպոսը տկարութեան պատճա- րով հրաժարվում է այդ պաշտօնից:

Բաց անելով «Աղբիւրի» և «Տարազի» 1895 թ. բաժանորդագրութիւնը, այդ հրատարակու- թիւնները խմբագրութիւնը այս տարւայ մասին հետեւեալն է ասում. «1894 թ. աւանդին մենք

ընում այստեղ այն աստիճան կը զրուզվին կրքերը և այնպիսի իրարանցում կընկնի, որ մենք ստիպված կը լինենք, որքան էլ որ այդ անախորժ լինի մեզ համար, խօսել մի քանի անձնատրուութիւնների մասին, որոնք ուղղտ երը փառաւորապէս կուլ տալուց յետոյ բծախնդրութեամբ քամում են չըն- չին մի և զն երը և աղաղակով ի լուր աշխարհի՝ «Եթող գործ դրվի արդարութիւնը և թող քանդվի աշխարհը»:

Կրկնում ենք, շատ ցաւալի կը լինի, որ ընտ- րութիւնները չը հաստատվին, նրանք կատարվել են առանց էական զեղծման և յամենայն դէպս ձխականների տրամադրութիւնը և ցանկութիւնը պաւր արտայայտվել է ընտրութիւնների ժամա- նակ, այնպէս որ մեզ դարձանում է այն պարոն- ների վարմունքը, որոնք ակնյայտի տեսնելով, որ ծխականների մեծամասնութիւնը նրանց այլ ևս անյարմար է համարում իրանց պաշտօնների համար, ոչ միայն իրանց բարոյապէս պարտաւո- լած չեն զրուց հրաժարվել պաշտօնից, այլ և ու- ղիղ և անուղիղ միջոցներով աշխատում են քան- ղել տալ յաջորդաբար բոլոր անհպատ ընտրու- թիւնները, մինչև որ վերջապէս հանգամանքների պատահական դասաւորութիւնը ձայների մեծա- մասնութիւն տալ իրանց:

«Началь за здравіе, кончил за упокой,— կը մտածի երկի ընթերցողը: Ինչ արած, այլա-

ստացել ենք այնքան բաժանորդավճար, որով կարելի էր հրատարակել «Աղբիւր» և «Տարազ» ամենաշատը՝ երկու ամիս: Բայց մենք հրատարա- կել ենք արդէն տասներկու ամիս, սկսած ան- ցեալ նոյեմբերից, և երկու ամիս էլ դեռ պէտք է հրատարակենք: Ոչ ոքից կողմնակի նպաստ և օժանդակութիւն մի կ'ապէկ անգամ չէ ստացել խմբագրութիւնս և բայց այդ՝ հէնց այս 1894 թ. բաժանորդներից շատերը չեն վճարել իրանց պարտքը: Գիտեն մեր ընթերցողները, որ մեր այդ բաժանորդներին էլ տարվայ ընթացքում մի անգամ գէթ չենք յիշեցրել իրանց պարտքը: Խախ- թել 7000 րուբլու համող այս տարվայ մեր դէ- ֆիցիտը մենք ինչով ենք ծածկել,—չենք վստա- հանում զեկուցանել մեր բաժանորդներին, մի- միայն նրանց զգացումները չը վիրաւորելու հա- մար... Այսքան անկեղծաբար այսօր մենք զրոյց ենք անում մեր ընթերցողներին հետ, որովհետեւ մեր թերթիկի դործը մեր անձնակալին չէ վերա- բերում: Այդ խոստովանութիւնից յետոյ խոմ- բագրութիւնը անկացնում է, «Մեր գործն է այժմ կարօտ անկեղծ աշակցութեան: Եւ նրանք, որոնց նոյնպէս քաղցր է և ցանկալի մեր հանդէսների բարգաւաճումը, թող ամապարեն աշակցելու մեզ»:

Կիրակի, նոյեմբերի 13-ին, երկուցեան, թիֆլի- սի արքունական թատրոնում պ. Բատովովը ուս- սերէն լեղուով կը կարգայ մի դասախօսութիւն, որի նիւթն է հետեւեալը. «Մանկավարժական աշ- խարհում նոր խնդիրներ և մարքեր: Դասախօսու- թեան նպատակն է ի միջի այլոց ապացուցանել, որ պէտք է դասերի տեղադրութիւնը կրճատվի, և փոխանակ մի ժամ պարապելու, որով ի 40 րօպէ ժամանակ, որ պէտք է դպրոցների մէջ արհեստներ մտցնել և այլն: Դասախօսութեան սկիզբն է երկուցեան 8 ժամին:

Ֆինանսների մինիստրութիւնը դիմել է կովկա- սի կառավարչապետին առաջարկելով՝ մի յատուկ մասնաժողով կազմել ժողովուրդն այն արդիւնք- ները, որոնք պէտք է ուղարկվեն Նիւն-Եւր- թորդ 1896 թ. համառուական ցուցահան- դիսին և առհասարակ ամեն տեսիլ գիւրութիւն- ներ տալ այն անձանց, որոնք կը ցանկանան ցուցահանդիսին մասնակցել:

«Петербургская Газета» լրագրի հատով ծա- խելը աղբիւրված է երկու ամսով:

Պ. Սուվորին իր օրդանի մէջ՝ «Нов. Время» լրագրում, հերքում է Լեյպզն և Զախարին պրօ- ֆեսորների մէջ եղած խաչոր տարաձայնութիւն- ների մասին տարածված լուրերը: «Բերլինով անց- նելու ժամանակ, ասում է նա, ես տեսնվեցայ մի շատ յայտնի ուսու մարդու հետ, որը տեսնվել էր պրօֆեսոր Լեյպզնի հետ, որը նա Սպալայից վերադարձել էր Բերլին և հարցրել էր նրանից թագաւոր Կայսրի հիւանդութեան մասին: Լեյպզ- նի դիօղնօղը նրանով էր միայն զանազանվում

պէս չէ կարելի, երբ մարդ խօսում է հայկական կեանքի երեւոյթների մասին: Մարդ աշխատում է լաւատես լինել, որոնում է միջկարական նշան- ներ, յոյսը իրողութեան տեղ է ընդունում, ար- դարացնում է լատինական առածը, թէ «ցանկու- թիւնը կարծիքի մայրն է», բայց յանկարծ սխա- փեցնում է ձեզ մուսլ իրականութիւնը՝ կանգնե- լով ձեր առաջ իր հայկական վիթխարի ես երով, զալարվող նախանձով, խաւարագործ դաւերով, և համապիւստ մեռելային անտարբերութեամբ:

«Մինչև ամպը չորոտայ, ուսուը խաչ չի հանել», —ասում են ուսուները: Հայի համար այդ էլ քիչ է: Նրան պէտք են աւելի խիստ միջոցներ, պէտք են հրաշքներ, չը տեսնված աղէտներ կը լինեն արդեօք հրաշքներ՝ յայտնի չէ, բայց որ կը լինեն աղէտներ,—անկասկածելի է: Սով, արածութիւն, կոտորած, խօսերա, ամեն տեսան թշուառութիւն թախիլում է մեր գլխին, ինչպէս առատութեան լեղիւրից, իսկ մենք ընում ենք, կամ խորիզնե- րով դադարվում, սպասելով, որ առարը մեզ հաց տայ, օտարը մեզ բռնի, օտարը մեզ օգնի: Վայ այն ազգին, որ չէ կարողանում ողու վեհութիւն ցոյց տալ մինչև անգամ մեծամեծ աղէտների ժա- մանակ:

Տ. Յովհաննիսեան

Զախարիայի զիօգնողից, որ այդ գերմանացի բժիշկը աւելի մեծ յոյսեր էր տալիս ոչ թէ թագաւորի առողջանալու վերաբերմամբ, այլ մասին խօսք էլ չէր կարող լինել:—այլ Նրա կեանքը մի փոքր աւելի երկարատեւութեամբ թէ լէզէն և թէ Զախարիայ երկուսն էլ թագաւորի հիւանդութիւնը մահացու էին համարուում և բժշկել կարող էր Նրան միայն հրաշքը, և ոչ թէ բժշկութիւնը: Արեւոք սխալվում էին նրանք այդ զիօգնողի մէջ, այդ ցոյց տուեց բժշկական քննութիւնը, որից երևաց, որ հիւանդութիւնը ճիշդ էին որոշել, բայց այդ հիւանդութիւնը բժշկելու միջոցները, որոնց չնորհիւ վնասվեցին այնպիսի նշանաւոր օրգանները, որպէս են՝ սիրտը և երիկամուկը, շատ անկատար են բժշկականութեան մէջ, և այդ բանի մէջն է, երևի, ամբողջ ճշմարտութիւնը:—

«Տարազ» շաբաթաթերթը հաղորդում է, որ ծերունի վիպագրող Պետր Գառնիան ուղևոր է քահանայ ձեռնադրվել թիֆլիսի Քաղաքացիական և քաղաքացիական Սարգիս քահանայ Բեգլարյանի տեղը: Ի դէպ: Մեզ հաղորդում են, որ կաթողիկոսական կոնգրեսով այդ եկեղեցու ժամանակաւոր քահանայ է նշանակվել Բաթումի քահանայ տէր-Յովսէփ Տէր-Պետրոսեան:

ՇԱՄԱՍԻՈՒ գաւառի Մատրասա գիւղից մեզ գրում են. «Ներկայումս բողոքականութիւնը մեծ ծաւալ է ստացել. Մատրասում համարեա ամեն կիրակի օր զալիս է մօտակայ քաղաքից քարոզիչը և պրօպագանդա անում: Եւ անա այդ ժամանակ, երբ զիւղացիներին հարկաւոր է մի փոքր ի շատ օրինաւոր քահանայ, որ կարողանայ գիւղացիներին առաջնորդ լինել, ընդհակառակը, այժմ ուղևոր է 600 հարիւր տուն ունեցող բազմամարդ գիւղի վրա քահանայ լինել աղէտ, մինչև անգամ ծիսական ուսումնարանի կրթութիւնից դուրս մի տիբացու, որը 8 տարի դերձակութեամբ և 5 տարի խոհարարութեամբ է պարապել: Եւ միթէ զարմանալի է, որ այդպիսի քահանաներ ունեցող գիւղերում բողոքականութիւն կամ կաթողիկէ կղերան է տարածվում:—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Այս քաղաքի հաստատ աղբիւրից տեղեկացանք, որ աւազակային խումբը, Նաբիի առաջնորդութեամբ, գրեթէ ոչնչացրել է Արաքսի անցնելիս լեռնազրում են, որ միայն զապով է Նաբին իր երկու ընկերներով. մնացածներից որը սպանվել է, որը գոհ է գնացել Արաքսի ալիքներին: Ի միջի այլոց սպանվել են չորս կին, որոնք աւազակների կանաչք են եղել և մի երեխայ: Վեց ձի է բռնվել, որոնցից երկուսը բռնված են եղել թէ ապրանքով և թէ պտղածնութիւն: Աւազակային խմբին հայածողը եղել են սկզբումը չորս սահմանապահ զինուորային և ապա վերջում օգնութեան են եկել միւս ընկերները: Նախիջևանի զաւառապետը, լսելով անցքի մասին, անմիջապէս գնացել է այնտեղ:—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Այստեղ շատ վատ տղաւորութիւն թողեց Մետրոպ արքեպիսկոպոսի ձեռքով դանձակեցի ոմն Յովնանէսի քահանայ ձեռնադրվելը, որը նոյն իսկ 6 ամիս բերդ էր նստել: Մանրամասնութիւնները միւս նամակով կը հաղորդենք:—

ԳԱՐԱՐԱՍԻՑ մեզ գրում են. «Այս գիւղը զբոսավում է պատմական Որոտն գետի ափին, որը բաժանում է Սիւնանը Զանգեզուրից: Այս գետը զարնան ժամանակ այնքան մեծանում է, որ գրեթէ կտրում է երկու կողմի ժողովրդեան յարաբերութիւնը: Սակայն այս յարաբերութիւնը այնքան անհրաժեշտ և ստիպողական է, որ մարդիկ շատ անգամ ստիպված են լինում կռուելու սրբնթաց գետի ալիքների հետ՝ միւս ափը անցնելու համար: Այս է պատճառը, որ տարի չէ լինում, որ Որոտն գետը մի քանի մարդիկ զոհ չը տանի: Չը նայելով դրան, մեր գիւղերը իրանց աղքատութեան պատճառով չը կարողացան մի կամուրջ շինել գետի վրա և բազմաթիւ զոհերի առաջն առնել: Իբրեւ հասարակութեան ցանկութեան և պահանջի արտայայտութիւն, այս տարի դուրս եկաւ մեր գիւղից երիտասարդ Ա. Մէլիք Ալաշիբեկեանը, որը յօշոտ դրած իր եռանդի և բարեգործների վրա՝ ձեռնարկեց Որոտն գետի վրա քարէ կամուրջ կառուցանելուն, որը կիսով

չափ այժմ առաջ է գնացել: Այդ երիտասարդը ժապաւինեալ մատենանով զիմում է օտարաշէն զբաղել: Բարեգործ հայերի օգնութեան յուսալով, որ չեն խնայելու իրանց լուծան, քանի որ այդ լուծանքով ազատած պէտք է լինեն սյն մարդկանց կեանքը, որոնք անհրաժեշտ կարիքից ստիպված՝ մատնուում են իրանց Որոտն գետի կատաղած ալիքներին:—

ԳԶԱՌՈՒՅՑ մեզ գրում են. «Մօտ երկու շաբաթ սրանից առաջ Ռուսաստանի լրագրիւրներից արտատպելով, թիֆլիսի մի երկու հայ թերթերը հաղորդեցին, որ տեղիս յայտնի զինեւածառ Ս. Ե. Խլմիւրեանը անձնապաշտութիւն է գործել: Կարող ենք հաղորդել, որ այդ տեղեկութիւնը միանգամայն անհիմն է և մինչև օրս ոչ մի ապացոյց չը կայ, որով ստուգվել խղճիւրեանի անձնապաշտութիւնը:—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԱՍՈՒՆԻՑ

Մեր թղթակիցներից մէկը հաղորդում է մեզ հետեւեալ տեղեկութիւնները Սասունի մասին, որ ստացել է Մուշից:—

«Սասունը, բացի Տաւրիկից, —կօփոնների այդ ապաւանտոս, անտառախիտ աշխարհը զրկվեց 8000-ից աւելի բնիկ հայերից, չէն ու բազմամարդ գիւղերից:—

«Բարձրացէ՛ք Մշոյ լեռանց ամենաբարձր կատարը՝ Գիւն-Ֆաթոյի վրա և հեռատես հայեացքները ուղղեցէ՛ք դէպ հարաւի կողմի լեռները, և իսկոյն պարզվում են ձեր առջև սև սև պատկերներ, սըրտաճմրկ տեսարաններ, աղեկէղ և ընդմիջտ աղբիւր իրողութիւններ...»

«Մարդկային բնակարանների տեղ նշմարվում են աճիւնի սևացեալ մոխրակոյտերը. եկեղեցիների նմոյն անգամ չէ երևում. իսկ այդ լեռնական խաղճերն զբոսը չբացան կամ ինչ վախճանի հասան,—այդ գիշատիչ հրօտայինները դիտես:—

«Ահա վրա հասաւ և հնդամեայ ձմեռն, և այդ զարհուրելի վայրերը քողարկվում են սպիտակ սաւանով, հետեւապէս, արեւահեղ պատերազմական ժխորին փոխարինում է խոր լուսնութիւն, երկարատեւ ընդուն:—

«Անցնե՛ք Մշոյ դաշտը, որն իսկապէս կամուրջ էր եղել անհամար խառնիճաղանձ ամբոխին:— Թէն մէջնից չը կոտորվեց, չը սպանվեց, սակայն կենդանի մնեւ է եղած. բարբարոսների խայտաճամուկ բանակը Սասնոյ վրա է արշաւում և հակառակ,—ամեն անգամ դաշտեցին է տուժում:—

«Մենք այս անգամ անկարող ենք մի առ մի նկարագրել Մշոյ գիւղերիցի մանրամասն պատահարներն ու չարիքները: Գուցէ այդ շուտով կարող լինինք անել:—

«Մշում հացի արժէքը օրից օր աւելանում է. սովը կրկին մօտենում է գիւղական կիսաւեր խրճիթին, այդպէս բերանը բացած: Ժողովրդի ներկայ դրութիւնն խիտ անձուկ է. բոլորն էլ ահ ու դողի մէջ սարսափում են մօտալուստ հրէշէն:—

«Անցնող տարեկն է Վեր, Տիգրանակերտ և այլուր գաղթողների հոսանքը անընդհատ շարունակում է, այնպէս որ—Զիւրաթ, Խէյլաթ, Հայկերտ, Գուրգուլեյան, Գուսմ, Խաչիպաղաղ, Խոբեր, Բիւրջ, Գուսման և Գրեգորի գիւղերի երկրորդից ծուխ անգամ չի ելնէ...»

«Պանդուխտների հոսանքը տակաւ առ տակաւ չափազանցում է սովորականին, թերեւ շատերն մտազէր են վերջնական թողնել այդ սըղաւոր երկիրը:—

«Մուշ գնացող եւրօպացի քննիչներ կառավարութիւնից արգելվում են Սասուն անցնելու, դուրս գնալու են և արդէն հետազոտում են ամեն ինչը, իսկ հետեւեալը տեղեկագրում են անցապաղ:—

Տարօնքի

ՀԱՅՏԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄՈՒՇԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Անգլիական «Daily News» լրագիրը հաղորդում է Կ. Պոլսից ստացած մի տեղեկութիւն այն սարսափելի և արեւահեղ կոտորածի մասին, որ տեղի ունեցաւ հայկական բնակավայրերում Մուշի մօտ: Մանրամասնութիւնները դեռ ևս յայտնի չեն: Թիւրքաց պաշտօնեաները հաւատացնում են,

որ մի առանձին բան չէ պատահել, այլ միայն մի աննշան ապստամբութիւն էր այն հայերի, որոնք չէին ցանկանում հարկերը վճարել, և այդ ապստամբութիւնը ճնշվեց առանց որ և է ջանքերի:

Սակայն, վաճառականների պատմածների հրմածայն, որոնք տեղեկութիւններ են ստանում տարվայայդ ժամանակում դժուարամեծ տեղերից, թիւրքերը բարոյեանք արին 25 զիւղեր և կոտորեցին մօտ 3000 հայեր, հաշուելով դրանց մէջ կանանց և մանուկներին:

Ուրիշ աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համեմատ, գործի դրութիւնը հետեւեալն է: Հայ գիւղերի վրա, տղամարդկանց բացակայութեան ժամանակ, թիւրքերը յարձակվեցին և կոտորեցին, բայց տղամարդիկ վերադառնալով սկսեցին հաղածել աւազակներին և խեցին նրանց ձեռքից աւարել: Իսկ թիւրքաց կառավարութիւնը, տեղեկութիւն ստանալով հայերի այդ քաջ գործողութիւնների մասին, նրանց դէմ զորքեր ուղարկեց, որոնք և վերջնականապէս կոտորեցին գիւղերը:—

Բ. ԳՈՒՌԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Բ. Գրան և թիւրքաց հայերի մէջ, «НОВОСТИ» լրագրի Կ. Պոլսի թղթակցի խօսքերով, տարածանութիւններ են սկսվել: Բ. Գուրը հաղորդեց պատրիարքական ժամանակաւոր տեղապահին, որ սուլթանը թոյլ է տալիս հրաւիրել հայոց ազգային ժողովը՝ պատրիարք ընտրելու համար: Սակայն կայսերական իրադէյն մէջ մատնացոյց չէ արված, թէ անհրաժեշտ է ընտրել պատրիարքական երկու մշտական ժողովներ (կրօնական և քաղաքական), որոնք, ինչպէս և յունաց մէջ, բաժանուում են իրանց մէջ պատրիարքի աշխարհական իշխանութիւնը:—

Բ. Գուրը, քաղաքական նպատակներով դիտաւորութիւն ունի վերացնել այդ մշտական ընտրողական հիմնարկութիւնները, որոնք յոյների և հայերի կողմից ազգային պատնէշ են համարվում այն իրաւունքների և արտօնութիւնների, որ շէնորհված են եղել իրանց սուլթաններից: Սուլթանի իրադէյն թոյլ է տալիս հայոց ազգային ժողովին դուստրվել՝ անյապաղ պատրիարք ընտրելու համար միայն: Սակայն ժամանակաւոր պատրիարք Հմայեակը ի դերն հանեց Բ. Գրան այդ նպատակը, հրաժարվելով ընդունել իրադէյն այդ ձեռքից: Եթէ այդ տարածանութիւնը չը վերացվի, ասում է թղթակիցը, թիւրքահայկական յարաբերութիւնները առաջվանից աւելի վատ ընթացք կը ստանան:—

ՖԻՐԱՆՑ ԿՈՇՈՒՆ ԵՒ ՈՒՆԳԱՐԱՅԻՐ

Ունգարացիները կրկին խօսեցնել են տալիս իրանց մասին Վիեննայում Ներկայումս ամբողջ Ունգարիան արքայական պատիւներ է տալիս ունգարական յայտնի ազգայնի որդուն՝ Ֆրանց Կոշուտին, և այդ արտասովոր պատիւները և ցոյցները այնպիսի տպաւորութիւն են գործում Վիեննայում, որ ունգարական միլիտար Վեկէլէ կանչվում է Վիեննա, Ֆրանց Կոշուտի կայսրի մօտ:—

Մեծ էմիրանտի որդին, Ֆրանց Կոշուտ, ծայրահեղ ձախակողմեան պատգամաւորների ուղեկցութեամբ, այցելում է ունգարական դաւաճական քաղաքները, և ամեն տեղ նրան համարեա արքայական պատիւներ են տալիս: Աչքի առաջ ունենալով Կոշուտի մեծ անունը և ժողովրդական հոգեւոր, ունգարական կառավարութիւնը երեք հանգիստ չափով կը նայէր այդ ցոյցներին, եթէ նրա վրա ճնշում չը գործէին Վիեննայից, որ Կոշուտից վախճանում էին և ասում էին կենսաբանական, իսկ այժմ վախճանում են մինչև անգամ նրա ստուերից:—

Ի հարկէ, ամենքին հասկանալի է, որ ունգարացիները, պատիւներ տալով և ցոյցներ անելով որդուն, որը մինչև օրս ոչնչով չէ ցոյց տուել իր քաղաքական ձիւղերը, ցանկանում են միայն պատել նրա հօր յիշատակը: Եթէ Կոշուտի անունը այնպէս մեծ յարգ չունենար, Ֆրանց Կոշուտին վաղուց արդէն կը քնէին Ունգարիայի առանձնանքից, որովհետեւ նա դեռ ևս ունգարական քաղաքացիական իրաւունքներ չէ ձեռք բերել, այլ խառնական հպատակ է:—

Վիեննայի լրագիրների խօսքերով, Կալսոյի մինչև անգամ դիմել է խառնական կառավարութեանը՝ խնդրելով ճնշում գործ գնել Կոշուտի որդու վրա և արգելել նրան ափսոսանք անել չբարեկամ երկրում, այսինքն Ունգարիայում:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Բօստօն, հոկտեմբերի 25-ին

Հասարակաց գրադարանները սրբազան տաճարներ են, ուր սրբոց մատուցների տեղ հին և նոր իմաստնոց մարի կենդանի արտադրութիւններ կը պահուին:—

Նոր աշխարհի մէջ այս տաճարներու սկիզբը դրեւել այնքան դժուար չէ, որքան հոյն մէջ, ուր գրեթէ ամեն հաստատութեանց սկիզբը մշուշի մէջ կը պահուի:—

Միացեալ-Նահանգների առաջին գրադարանը կազմած է 1638 թւին Հարվարտի համալսարանը, բայց իսկապէս ժողովրդական գրադարանների գաղափարին առաջին յղացողը եղել է Ֆրանքլինը, որ 1731 թւին կազմել է առաջին ընկերական գրադարանը Ֆիլադելֆիայում: Ամերիկացի նշանաւոր փիլիսոփա-քաղաքագէտն այն ատեն, դեռ իր ծաղիկ հասակին մէջ, թէև հազիւ բարեկամաց չըջանին ծանօթ, բայց իր եռանդով և օրինակով մեծ շարժման առաջնորդ հանդիսացաւ: 37 տարւան ընթացքում 18 գրադարաններ կազմուեցան քիչ կամ շատ իր ծրագրին հետեւողութեամբ:—

Պէտք է ըսել, թէ այս գրադարանները մեծ մասամբ մասնաւոր դասակարգի մը պատկանելով, այնքան էլ հասարակական նշանակութիւն չունէին: 19-րդ դարու սկիզբները մեծ քաղաքներու մէջ սկսան հաստատուել պատմական, դիտական, վաճառականական, զինուորական և աստուածաբանական առանձին-առանձին թանգարաններ նմանօրինակ նպատակներով կազմված ընկերութիւնների տրամադրութեան տակ, որոնք մասնաւոր պայմաններով թոյլ կուտային հասարակութեան զարգացած մասին՝ օգտուել իրենց հաւաքագրու գրքերէն և ձեռագրերէն:—

Կատարակութեան ծաւալելովը գրադարանների պէտքը աւելի զգալի դարձաւ, մինչև որ ժողովրդական խնդրանք կառավարութիւնը սկսեց ժողովրդական գրադարաններ բանալ: 1854 թւին Բոստօնի հոգեւորական, զինուորական և աստուածաբանական հասարակութեան առջև, ուր ամեն մարդ կարող է մտնել առանց ու է պայմանի: Այս գրադարանի բացումով կը սկսի ժողովրդական գրադարանների շրջանը. 1853—76 թիւը 2,000 գրադարաններ են բացուել Միացեալ-Նահանգների զանազան կողմերը: Միայն Մասաչուսեցի նահանգը տարեկան 500,000 ֆրանկ յատկացրեց իր 227 գրադարանների ծախսը համար, թէև սրանց մի կարծիք մասն մասնաւոր նուէրներ և կտակներ ալ կընդունեն: Այս ծախքի մի մեծ մասը կը վճարուի չնրեր վրա դրուած տուրքերի հասոյթէն (Այս սկզբում Կ. Պոլսում կարելի էր 10-ից աւելի գրադարաններ պահել): Բոստօնի մէջ է Ամերիկայի ամենէն հարուստ գրադարանը իր 600,000-էն աւելի հատորներով, որ եթէ ոչ իր ձեռնագրերով, գէթ իր կանօնաւոր վարչութեամբ՝ աշխարհի մեծագոյն գրադարանների հետ կարող է մրցել: Չորս տարիէ յետէ նոր չէ՛ք մը կը շինուի քաղաքին ամենազեղեցիկ թաղերուն միոյն մէջ, ու քիչ ժամանակէն պիտի փոխադրուին գրքերը, որոց համար նեղ կուզայ հին շէնքը:—

Նիւ-Եօքի նահանգն ալ նշանաւոր է իր գրադարաններով: 1892 թւին այդ նահանգի գրադարանների վարչութիւնը մի նոր ծրագրով շրջիկ գրադարաններ հաստատեց, որը բաւական հետաքրքրաշարժ են:—

Որ և է գիւղի բնակիչները, ենթադրելով թէ գէթ 25 հարկ վճարող մարդ ունեն իրենց մէջ, խնդրագրով մը կը դիմեն այն վարչութեան, որը օրինական ապահովութիւնը ստանալէ յետոյ ձաւրայ կը հանէ գրադարանը, որ 50—100 հատորներէ կը բաղկանայ, երբեմն աւելի: Գրքերը, որ երբեմն գիւղացիներէն և երբեմն վարչութիւնէն կընտրուին, ընդհանրապէս կը վերաբերին երկրագործութեան, գիւղատնտեսութեան, թեթև գրականութեան, պատմութեան և այլն: Գրադարանը 1—6 ամիս թեւ կը մնայ գիւղը, յետոյ իր տեղը յաջորդին թողնելով՝ հրաժեշտի ողջշնը կուտայ ուրիշ տեղ մը գտնուելու:—

1892-ին 90 շրջիկ գրադարաններ կային Նիւ-Եօքի նահանգին զանազան կողմերը:—

1893-ին բովանդակ Միացեալ-Նահանգներին մէջ կային 3842 գրադարաններ, 12,569,540 հատորներով, սրանց 64-ը միայն 1800 թւից առաջ հաստատուել են:—

Այս և հետեւի թուականները բաւական պերճաւոր են ցուցնելու, թէ որպիսի համեմատութեամբ կան ժողովրդեան ընթերցասիրութիւնը 1800—1825 թիւն հաստատուած են 179 գրադարաններ, 1825—50 թիւը՝ 551, իսկ 1850—75 թիւը՝ 2240 գրադարաններ:

Այս գրադարանները թէև անկախ, բայց սերտ կերպով միացած են իրարու հետ: Գրադարաններ չկան ընդամենը միութիւնը, որի վերջին համաժողովը գումարուեցաւ Զիլապոլիս 1893 թիւն, մի վարչական միադուր մարմին ունի ամեն գրատունէն զրկուած ներկայացուցիչների ժողովին քուէով ընտրուած: Այդ վարչական մարմին իրեն օրգան թերթ մ'ալ ունի «Library Journal» անունով, որ կը հրատարակուի Ուաշինկթըն: Բացի այդ թերթէն առանձին կը հրատարակուին նաև գրքերու ճոխ ցանկեր, միշտ զանց չառնելով վերջին հրատարակութիւնները, ինչպէս նաև նրանց մասին ծանօթ հեղինակները քննադատութիւնները:

Միջակ գրադարանի մը համար հարկ եղած գրքերու շատ ցանկեր կան հրատարակուած, որոնց ամենէն ընտիրը կը համարուի նիւ-եօքսի օրիորդի մը 5000 գրքերու ցանկը:

Այս դիրութիւնները ունենալով հանդերձ կը պահանջուի, որ քաղաքի մը գրադարան կամ գրատունը ժողովը կատարեալ հմտութիւն ունենայ ինչ և նոր գրականութեան, ընդհանուր պատմութեան, ժամանակակից գիտութեան մէջ: Այդ պաշտօնին համար ընտրվողները բաւական խիստ քննութեան կենթարկուին: Մի քանի զօլէսներ գրադարանի մասնագիտութեան համար երկամեայ ընթացք մ'ունին: Մեծ քաղաքների գրադարանների պատերն մեծաւ մասամբ այդ շրջանը լրացուցողներ են:

Ամերիկայի գրադարանը ընդհանրապէս տնայար է ամերիկեան ճաշակի, մտքութեան և քաղաքավարութեան: Ենթեր կոկիկ, անձայն, պարզ և հրապուրիչ է միանգամայն Գրադարանը ամառը զով, ձմեռը տաք, լաւ լուսավորուած, ամեն դիրութիւն կը տայ ընթերցասիրին Մասնաւոր հոգատարութիւն կը լինի ուսանողների համար, որոնց յատուկ սենեակներ կան շատ տեղեր, որ կրնան նաև գրել, նկարել կամ գծել:

Գրադարանի վարչութիւնը միշտ պատրաստ է ընթերցողին, խնդիրի համաձայն, իրենց ուղարկութիւն վրիպած նոր գրքեր բերել տալ, շատ տեղեր խոշոր գրքերով կը ծանուցանուի. «կը խնդրենք ընթերցողներէն, որ բարեհաճեն մեզ իմացնել» գրադարանի մէջ չը գտնուած օգտակար գրքերու անունը: ***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ արքայազն Գարնիէի նախագահութեամբ կայացած ժողովը վճռեց ստորագրութիւն բանալ՝ կայսր Ալեքսանդր III-ի արձանը կանգնեցնելու համար Պարիզում:

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ մի քանի շաբաթ առաջ Գաղղիոյ ստացաւ ի Տէր հանգուցեալ կայսրի ինքնագիր նամակը, որպէս պատասխան այն նամակի, որ Գաղղիոյն գրել էր Նրան, ցանկանալով նրան առողջութիւն:

—Լրագիրները հաղորդում են, որ պրոֆէսոր Լէյպցիգի Բերլին վերադառնալուց յետոյ անմիջապէս դիմում էին Նրան զանազան հարցմունքներով հանգուցեալ կայսր Ալեքսանդր III-ի մասին: Իրան դիմողներից մէկին, պրոֆէսորը ի միջի այլոց պատասխանեց. «կայսր Ալեքսանդրը կատարեալապէս զգում էր իր զորութիւնը: Մինչև վերջին րօպէն նա կատարում էր կառավարչի պարտաւորութիւնները: Մահվան նախընթաց երեկոյեան նա դեռ ստորագրում էր թղթերը: Եւ միայն մէկ քան կարող եմ ասել. կայսրը համարձակ նայում էր մահվան երեսին. նա մեռաւ, որպէս պատշաճ է իսկական տղամարդին. նա մեռաւ, որպէս հերոս:»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 7 նոյեմբերի: Լրացումն թաղման ցեղեմնիայի, թագաւոր կայսրը տաճարը ժամանակ թաղմանը սգային կառքով այրի կայսրուհու, Բարձր Հարսնացուի և Մեծ Իշխանուհի Օլգա Ալեքսանդրովնայի հետ միասին: Տաճարում կանգնած էին կայսերական Լյուտանիքի ձախակողմը

օտարերկրեայ պատգամաւորութիւնները, թագաւորի և թագուհու ետեւ կայսերական Լյուտանիքի անդամները, և ապա օտար հիւրերը: Գերեզմանը ներսից զարդարված էր թարմ ծաղիկներով, որոնք յետոյ բաժանվում էին աղօթողներին ի յիշատակ: Գաղաղը առաջ դրին զաղէտով ծածկված աստիճանների վրայ, յետոյ պալատական 8 գրէնադէները և այն գնդերի ֆէլդֆելէները և վախճանները, որոնց չէֆ էր հանգուցեալ կայսրը, զաղաղ իջեցրին գերեզման պնձի արկղը, որը և փակվեց երկու բանալիներով: Արձաթէ պսակների մեծ մասը կախված են տաճարի սրահների և պատերի վրայ: Բոլորը 900 պսակներից աւելի է, 2 միլիոն ը. արժողութեամբ: Գերմանական կայսրի պսակը ժամանացութեան ժամանակ գրված էր զաղաղի մօտ իրանց մեծութեամբ և զօրծուածքով աչքի էին ընկնում Ֆրանսիական պսակները: Թագաւոր կայսրը գնաց տաճարից Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչի հետ միասին, իսկ թագուհին՝ Բարձր Հարսնացուի և Մեծ Իշխանուհի Օլգա Ալեքսանդրովնայի հետ: Տաճարի առջև, որպէս պատուաւոր պահակ, կանգնած էր հուսարների լէյբ-գվարդիայի զուգը, որին թագաւորը ողջունեց: Թագաւորի հեռանալու ժամանակ երաժշտութիւնը օգնեց նուազեց. բերդի զրան մօտ նոյնպէս կանգնած էր լէյբ-գվարդիայի հեծելազօր գնդի պատուաւոր պահակը: Թագաւորին դիմաւորելու համար: Գաղղիները լինեց ժողովրդով: Եղանակը ամառամած է, բայց առանց անձրևի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 նոյեմբերի: Եւրօպական մայրաքաղաքներից հեռագիրներ են ստացված երկ տեղի ունեցած հոգեհանգիստների մասին, ի Տէր հանգուցեալ կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի մարմնի թաղման առիթով. մաղադիրները փակված էին. քաղաքները սղաղկեաց են: Այսօր Պետերհոֆում վախճանվեց պիանիստ-կոմպոզիտոր Ա. Գ. Բոբինշտէյն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 8-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .	92 ը. 25 կ.
Բերլինի վրա 100 մարկ . . .	45 ը. 15 >
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36 > 60 >
Ռուսի . . .	արծէ . 7 > 41 >
Մաքսային կուպոններ . . .	148 > 25 >
Արծաթ . . .	. . . > >
Օբրուային դիմիտ . . .	5 > 7 >
Եփտ. բանկի 50/0 տօմս 1 շրջանի . . .	. . . > >
. . .	2-րդ . . . > >
. . .	3-րդ . . . > >
40/0 պետական բէնտա . . .	95 > 25 >
50/0 ոսկեայ բէնտա 1884 թ. . .	158 > 50 >
4 1/2 ոսկեայ փոխառութիւն . . .	. . . > >
Արենեան 5/0 փոխառ. 1-ին շրջ. . .	. . . > >
Ներքին 50/0 առաջին փոխառութիւն . . .	240 > 50 >
. . .	երկրորդ . . . 219 > >
Պետական երկաթուղային բէնտա . . .	102 > >
4 1/2 բէնտա . . .	. . . > >
40/0 ներքին փոխառութեան . . .	96 1/8 > >
50/0 գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի . . .	. . . > >
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութիւն . . .	189 > >
Գրաւ. թղթ. . .	. . . > >
4 1/2 0/0 վկայակ. դիւղ. հող. բանկի . . .	. . . > >
4 1/2 0/0 գրաւական թղթեր կալուած. . .	. . . > >
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. . .	150 > >
. . .	թղթաղ. . . > >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները . . .	100 5/8 > >
Մոսկուայի քաղաք. օբլիգացիաներ . . .	100 1/3 > >
Օղէսայի . . .	100 > 25 >
Թիֆլիսի . . .	. . . > >
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի . . .	101 > >
. . .	Գրաւ. թղթ. . . 101 > >
Ս. Պետերբուրգի բօրսայի արամագրութիւնը ամառ է:	

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՍՏԱՎՐՈՊՈԼ. Յ. Ղազեանց. Գուր խնդրում էք «Մշակի» համարները այժմ ուղարկել Ստավրօպոլ ձեր անունով: Բայց չէք յայտնում թէ առաջ որտեղ էիք ստանում: Դրանցից էք յայտնել:

ԲԱՒԱԽԱՆԻ, Բ. Գաբրիէլեան: Այժմ աղաւտ տեղեր չը կան, ուստի ձեր նուիրած «Մշակի» մի համարը 1895 թիւ յունվարի 1-ից չորս ամսով կուղարկենք յերանի գաւառի Գաւալու գիւղի հայոց զպրօցին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ	
1) «ԵՎԷԼԻԱ», Էտիւդ, դրին, է . . .	50 կօպ.
2) «ԱՅՍԵՎ ԵՒ ԱՅՆԵՎ», . . .	10 >
3) «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖ. ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ», . . .	25 >
4) Նոյնը գերմաներէն լեզուով . . .	25 >
5) «DIE HUNGRSNOTH IN TURKISCHE ARMENIEN», . . .	20 >
վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և Թիֆլիսի գրաւաճառանոցներում:	
(№ 127)	3—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Վ. Ի. ՏԵՐ-ՅՈՎ ՍԷՓԵԱՆԻ

(Սօլջակ, Սաղօվայա, Սերգիեվսկայա փողոց, Տէր-Միլլերսոօվի տան հանդէպ, № 46)
Կովկասեան Ուսումնարանական Շրջանի պ. Հոգաբարձուի թոյլտուութեամբ, այս տարվայ սեպտեմբերի 3-ից բացվում է զպրոց պանսիօնով (աղաների համար): Դպրոցում ընդունվում են երեսեռ մանուկներ՝ պատրաստելու համար նրանց մանկու կառավարչական միջնակարգ զպրոցները:
Պայմանների մասին հարցնել պանսիօնում: (№ 130) 1—6

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ՏԵՐ-Ա. ԿՕՊՕՎԻ

Ընդունում է երթևեկներ, կիսագիշերօթիկներ և գիշերօթիկներ: Սօլջակ, Գանօվա-կայա փ. № 11. (№ 127) 4—10

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՐԾ ԶԱՍՏԱՏՎԱԾ 1881 թ.

„ՐՕՍՄԻԱ“

Ապահովարական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴԻԱՄԱԳԼՈՒՆԵՐ 20,500,000 ՐՈՒՐԼԻ

Ընկերութեան տոկոսները թղթերը պահվում են պետական բանկում:

Օրինակ: Լյուտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրում է 5.000 ը., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ: Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսական պրէմիա 30 ը. 80 կօպկ:

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100.000 ը. գումարների մէջ անձի կենքի համար:

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահակտ պայմաններով և արտօնութիւններով՝ հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում:

Ապահովագրական գումարը տրվում է մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խօլերայից և այլն:

Յունվարի 1-ին 1894 թիւ «Բօսիս» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ըրուբի գրամագլխի:

Ապահովագրողները մասն ունեն ընկերութեան եկամտներից:

Ապահովագրողների ղիվիդէնտը 1893 թիւ համար—12% է: :

Ապահովագրութեան համար այտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергиевская, ճ. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում: (№ 85) 15—15

ՀԵՌԱԳՐՈՒՄ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ

ԾԻԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թիւն ՈՍԿԷ ՄԵՆԱԼԻ—ԱՆ տվեր պէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱՌՈՐ ՊԱՐԳԵՆԵՐԻ—ԼԻՕՆԻ ցուցահանդէսներում:

Առաջարկում է նոր պատրաստած

ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

„Капризъ“	25 հատը 15 կօպ.
„Рекомендаціонныя“	
„Театральныя“	10 հատը 5 կօպ.
„Флора“	
„Экономныя“	10 հատը 3 կօպ.

Կարելի է առնել զօրծարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ: Ուղարկելու ծախսը զօրծարանի վրա է: (№ 104) 0—16

НЪМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMEYSKI, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ՝ գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահավորված նոսրեր, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նոսրերների դիրք 50 կօպէկից մինչև 3 ըրուբի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Գար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ բնաստրան, տեղեֆօն, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ: Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում: (№ 21) 105—130 (2.)